

## ՉԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍՍԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՅԵՐՈՒՄ

## VII

Չեւագիտութիւնը, գծագրութիւնը և ձեռարուեսք որպէս միացեալ երոգութիւն <sup>1)</sup>).

Բոլոր կարգի տարրական թէ միջնակարգ դպրոցներում դաստանդութիւնը նմանում է մանրալաճառի մի մի բազմաբովանդակ պահարանի, որը դարակները կողք կողքի ոչ մի յարաբերութիւն չունին իրար հետ. դրա պատճառն այն է, որ ուսման ծրագիրը որևէ վրայ կառուցուած է դաստանդութեան շէնքը, ներկայացնում է գիտելիքների մի անկանոն կոյտ: Մասնագիտութիւնները՝ կապուած ըստ ժամանակի և տարածութեան, զարգանում են ինքնուրոյն կերպով, առանց փոխադարձ ներգործութեան. Իւրաքանչիւր մասնագիտութիւն հանդիսանում է մի մոնադ, իսկ դաստանդութեան ամբողջութիւնը՝ բոլոր սեփերի ազատ և կոյր խաղ՝ այդպիսով, փոխանակ միական դպրոցի, ստանում ենք մասնագիտութեանց դպրոց, որի ձեռքին են բոլոր թելերը, բայց բացակայում է դժբախտաբար կապը, *variatio delectat* ահա այդպիսի դպրոցի առաջնորդ սկզբունքը: Ակներև է, որ նիւթի այդ օրինակ կուտակումը ոչ մի կրթական արժէք չէ պարունակում իր մէջ: Այսօր աւելի քան երբ և իցէ պահանջ է դրացւում օրգանական միութիւն հաստատել բազմօրինակ, ցեղակից նիւթերի մէջ, նրանց խառն ի խառն ձայները վերածել մի ներդաշնակ եղանակի, մի խօսքով կեդրոնացում ստեղծել ուսման բոլոր նիւթերի նէջ: Այդպիսի՝ իր բոլոր մասերում կեդրոնացած դաստանդութիւնը միայն, որպէս մի ամբողջութիւն և անքակտելի միութիւն, կարող է կազմակերպել մտքի շրջանը և այդպիսով, որովհետև վերջինս կամքի նախադուռն է, նաև կամքը բարոյապէս կերպաւորել: Նիւթերի անդամահատումով կամ միանդամայն կրճատումով չէ կարելի ծանրաբեռնման առաջն առնել, որ հեռեանք է, նիւթերի կուտակմանը, այլ բազմօրինակ ճիւրիւր մեջ իրական միութիւն հաստատելով:

1) E. Zeissig, Der Dreibnd von Formenkunde, Zeichen und Handfertigkeitsunterricht in der Volksschule.

Այսպէս օր. աշխարհագրութեան դասաւանդութիւնը, որ որպէս հնոց իր մէջ միացնում է մասնագիտութիւններից եկած ճառագայթները, յատկապէս կոչուում է կենդոնացնելու իմացութեան զանազան ձիւղերի մէջ. բնագիտութեան դասաւանդութեան միջոցին ևս մեծ յաջողութեամբ կարող են միանալ բնագիտական, բնախօսական, քիմիական և աշխարհագրական նիւթերը:

Գլխաւոր երեք առարկաներ՝ երկրաչափութիւնը կամ ձևագիտութիւնը, գծագրութիւնը և ձեռարուեստը, որոնք հաւասարապէս ձևերի հետ գործ ունին և որոնց տեսական աւելցումները ակներև է, գործնականի մէջ տակաւին միմեանց նկատմամբ բոլորովին անտարբեր են: Այս երրորդութիւնը պէտք է բաց էր բնական կեդրոնացած մի խմբակ կազմէ, որի անդամները իրար հետ միասնայով՝ միմեանց փոխադարձաբար լրացնում, հիմնադրում եւ բովանդակալից են դարձնում:

Ընդհանուր խօսքերով բնորոշելով ձևագիտութեան, գծագրութեան և ձեռարուեստի յարաբերութիւնը, այժմ փորձենք մօտիկից սահմանել նրանց նշանակութիւնը իրար համար:

Նախ կարևոր է կարճառօտ կերպով յիշատակել այն պատճառները, որ արգելառիթ են եղել այդ երեք առարկաների միութեանը:

Ձևագիտութիւնը սովորաբար հակումն է ցոյց տալիս զուտ մասնագիտական և վերացական—ակադեմիական բնոյթ բնորոշելու և ուսման մնացած ղիտցիպլինները անուշադիր թողնելու. այս երևոյթը բացատրուում է նորանով, որ նա սովորաբար ընթանում է համադրաբար, հետեւելով principium successionis-ին (յաջորդականութեան սկզբունք), սխտեմը՝ անկենդան կմխըրը, գերադասելով կենդանի և թանձրացեալ մարմինների լիւրը ձևերին: Սրան միացել էր նաև այն թիւր հասկացողութիւնը, թէ ձևագիտութիւնը, ինչպէս բարձրագոյն, այնպէս էլ տարրական դպրոցներում վերացական, Ֆորմալ ձեւով պէտք է աւանդուի. իսկ մարմինների ձևերը իրազննական դարձնելու համար կարելի օգտուել կարտոնից, փայտից, կրից, և թիթեղից շինած մոդելներով կամ պարզապէս գրատախտակի վրայ գծելով: Մոդելի և գրատախտակի պաշտամունքը արդէ ձևագիտութեան դասաւանդութեան հիմնական թերութիւններից մէկն է. այդ եղանակով աշակերտին առաջադրուում են մարմնի, մակարդակի, անկեան և գծերի մերկ ձևեր, որոնց սանք արտաքին աշխարհում բնաւ չի հանդիպում, որովհետև նրանք գիտական վերացումներ են. այդ ձևերը անջատուում, վերացուում են իրական աշխարհի առարկաներից, սրանց հետ մնայուն կա-

պակցութեան մէջ մնալով միայն կարող են ընթանուել: Այդպիսի դատաւանդութիւնը՝ նպատակ ունենալով զուտ տեսական հրահանգումն և ձևական սրամտութիւն, բացարձակապէս մերժում է իր միջից գործնական հասկացողութիւնը: Այս անխորհուրդ եղանակի պատճառով է, որ ձևագիտութեան դասը՝ իր չոր ու ցամաք հետազօտութիւններով, հիւթից և նիւթից զուրկ ամբիոնական իրէաներով անմտաշելի և ձանձրալի է դառնում աշակերտներին համար: Այստեղ էլ հասկանալի է, թէ ինչո՞ւ ձևագիտութիւնը ամենեին հակամէտութիւն չէ ցոյց տալիս դատաւանդութեան միւս ճիւղերին մօտենալու կամ նրանց հետ ձուլուելու:

Ինչպէս բացատրել սակայն այն հանդամանքը, որ գծագրութիւնը տրամադրութիւն չէ ցոյց տալիս յարեւու առարկաների ամբողջութեանը՝ Վճագրութեան դատաւանդութեան միջոցին աշակերտները սովորաբար ընդօրինակում են գծագրութեան օրինակները, լինին դրանք թղթի վրայ տպուած, թէ տախտակի վրայ գծուած: Այդ դէպքում իհարկէ ինքն իրեն մտածելու, դանելու կամ բարդումներ անելու մասին խօսք անգամ չինել չէ կարող: Փոխանակ կեանքից, կենդանի և թանձրացեալ օրինակից դէպի ձևը զիմելու, աշակերտներին ad oculos ցուցադրում են մերկ և դժգոյն կերպարանքներ<sup>1)</sup>: Եթէ պատահաբար օրինակներ վերցւում են բնութեան և արուեստի արտադրութիւններից, այնու—ամենայնիւ այդ դէպքում էլ կանդ են առնում այնպիսի օրինակներ յիշարայ, որոնք դատաւանդութեան այլ սահմաններում աշակերտին բնաւ չեն հանդիպում: Ահներև է, որ այս հանգամանքները խոչընդոտ պէտք է հանդիսանային, որ գծագրութեան դատաւանդութիւնը ներքուստ յարեք ցեղակից զիտցիպլիններին:

Ձեռարուեռտի դատաւանդութիւնն ևս, որ տակաւին քիչ դպրոցներում է հիւրընկալութիւն գտել, սկզբից և եթ ձգտումն չէ ցոյց տալիս պատուաստուելու դատաւանդութեան ընդհանուր բնի վրայ: Ինչպէս որ գծագրութեան նպատակն է պատկերացումները պատկերաւոր կերպով (գծադրօրէն) ներկայացնել, այնպէս էլ, կարտոնից թղթից, միայտից, կրից, մարմարից կամ մետաղից դանազան առարկաներ պատրաստելու նպատակը պէտք է լինի ոչ

1) Բնաւ թոյլատրելի չէ սկզբից եւ եթ ընդօրինակելի գծագրութեան օրինակները, միմիայն բաւական առաջ դնացած աշակերտները, որոնք ըմբռնում են օրինակը, կարող են այդ օրինակների միջոցով տեսնել, թէ առարկաները եւ մեկերը ինչպէս են գծադրօրէն ներկայացուած եւ ի՞նչ օրէնքներ են դործում նկարչական ներկայացման միջոցին:

Թէ սանին տեխնիկայէն ճարտարարուեստ դարձնել կամ նախապատրաստել որ և է արհեստի համար, ինչպէս շատերը կարծում են, այլ հնարաւորութիւն տալ նրան իր մտքերին և պատկերացումներին պլաստիկական արտայայտութիւն տալ: Ներկայացման այս երկու եղանակներին էլ՝ թէ գծագրական (գրաֆիկական) և թէ պլաստիկական մարդում են հոգու և մարմնի աչքերը: Ձեռքը գծագրական և պլաստիկական ներկայացման միջոցին աւելի ստոր պաշտօն ունի քան տեսողութիւնը\*:

Վերոյիշեալ երեք դիսցիպլինները միմեանց անհաղորդմնալով, զրկում են փոխադարձ օգնութիւնից, սպառում են սանի մտաւոր ուժերը, առաջ բերելով աններդաշնակութիւն ուսման նրկութիւնմէջ. այսպէս, օր. կարող է պատահել, որ ձեռագիտութիւնը զբաղւում է ուղղակիւնով, մինչդեռ գծագրութիւնը՝ շրջաններով կամ շրջանաձև մարմիններով իսկ ձեռարուեստը բրդաձև առարկաներով: Բայց որովհետև այս երեք դիսցիպլիններն էլ զբաղւում են միևնոյն նիւթով, այն է՝ ձևերով և ձևակերպելով, և որոշ չափով միևնոյն նպատակին են դիմում՝ պատկերացումներին և մտքերին նկարչական և պլաստիկական արտայայտութիւն տալ, բնական է, որ նրանք պէտք է ձգտէին միմեանց հետ զուգորդուել կամ ի մի ձուլուել:

Եթէ ձևագիտութիւնը, գծագրութիւնը և ձեռարուեստը զուգորդուելու են, անհրաժեշտ է, որ ձևագիտութիւնը՝ այս եռապետութեան առաջնորդը, ոտքից գլուխ փոխէ իր բնոյթը և նոր կերպարանք ընդունէ:

Ձևագիտութիւնը չպէտք է այլ ևս, ինչպէս մինչև այժմ, զուտ ձևերի դասաւանդութիւն լինի, այլ պէտք է դառնայ իրազիտութիւն, իրական դասաւանդութիւն, բնական գիտութիւն եւ որպէս այդպիսին՝ նաեւ հայրենագիտութիւն: Ձևագիտութեան դասաւանդութիւնը իր գիտօգութեան շրջանները պէտք է առնէ բնութեան և արուեստի հարուստ ձևերը. իսկ դասաւանդութեան համար որպէս իրազննական միջոց ծառայելու են ոչ թէ երկրաչափական դժերը կամ մոգելները, այլ բնական մարմինները, ընդաբոյս բնութեան և արուեստի գեղեցիկ ձևերով: Բնութիւնն ու արուեստն են այն արդաւանդ հոգը, որից սնունդ է ստանալու ձևագիտութիւնը: Ձևագիտութեան դասը պէտք է ձգտի աւակերտին ծանօթացնել յոջապատի ձևերի հարստութեան հետ. դրա համար հիմնական կանոն է՝ կենդանի,

\* Լեոսինգի խօսքերը՝ Յէ Ռափայէլը ամենամեծ նկարչական հանճարը կլինէր. եթէ դժբաղդարար առանց ձևաբերի ծնուած լինէր, ստուգում են նաև դասաւանդութեան համար:

բանձրացեալ առարկաներից արժամել կենդանի ձեւերը և յեօայ ենթարկել մտահայեցողութեան, պարզելու համար նրանց նշանակութիւնը: Բայց թանձրացեալ առարկաների և ձևերի պարզ դիտողութեամբ և ձևերի վերացման համար անհրաժեշտ մտահայեցողութեամբ դասաւանդութեան գործը դեռ վերջացած չէ. պէտք է հետևել նաև Գործադրութիւնը. որպէսզի վերացեալ ձևերը ամբաստնուեն յեզրութեան մէջ: «Ձևեր՝ դիտողութեան նպատակն է ձեռք բերել պարզ և պայծառ հայեցողութիւն» (Պետաաւուցցի). այս կատարուում է 1. շրջապատի իրական և մանրազննին դիտողութեամբ և 2) ձևերը վերլուծելով իրենց բաղադրիչ մասերին (մակարդակներին, գծերին, եզրներին, անկիւններին, կէտերին): Սակայն չէ հարելի միայն այդքանով բաւականանալ, որովհետև ձևագիտութեան դասաւանդութիւնը ապա . դալում զուտ ձևերի պատկերացումների հետ է միայն գործունենալու, անհրաժեշտ է, որ ձևերի պարզ և պայծառ հայեցողութիւնը լիովնուի պարզ և պայծառ պատկերացման. շատ սաների մէջ այս գործողութիւնը ինքն իրեն է կատարուում, առանց ուսուցչի միջամտութեանը, սակայն շատ աշակերտներ էլ կարօտ են մանկավարժական օժանդակութեան. յաճախ մտնուկներին պատկերացումները անորոշ, աղօտ և անբաւար են լինում. միակ միջոցը, ձևերի մասին սուտ և սխալ պատկերացումներ կազմելուց խուսափելու և մնացուն ու տեւական 1) պատկերացումներ ստեղծելու համար, է պակեւուր ներկայացումը, այլապէս ասած, պակեւուր ներկայացումը հնգ է քանում որոշ, պայծառ եւ տեւական պակեւուրումներ կազմելու համար. մի բան, որ պարզ հայեցողութեամբ կամ հայեցածի բանաւոր կամ գրաւոր ներկայացմամբ 2) ամենայնաջող գէպում անհարելի է. մինչդեռ պատկերաւոր ներկայացումը, որի միջոցով աշակերտը իր մտքերը և պատկերացումները մարմնացնում, թանձրացնում և ամրացնում է, այն աւաւելութիւնն ունի,

1) Ներքին պատկերը պէտք է տեւական լինի, այսինքն բաւական ժամանակ անցնելուց յետոյ էլ պէտքէ նոյն կատարելութեամբ վերարտադրուի:

2) Պատկերաւոր ներկայացումն եւս, ինչպէս մարի բանաւոր եւ գրաւոր արտայայտութիւնը, ներկայացման ֆորմալ միջոց է, ներկայացման իրարանջիւր եղանակը ներքինն է լոյս ընծայում, «Գծագրութիւնը ներկայացման շատ աւելի կատարեալ միջոց է, բան լիզուն, որովհետեւ լիզուի յաջորդականը (successive) հակադրուում է պատկերի համադրութեանը (simultane)». (Յիլեր):

«ՆՁէ կարողանայի լիզուով ասել, չէի նկարի» ասում է նկարիչ Ռունժը:

որ այդպիսով առարկայի կերպարանքը վեր է լուծուում բաղադրիչ մասերի, որին ապա հետևում է մասերի համադրութիւնը՝ ամբողջութեան կառուցումը<sup>1)</sup> Կարճ ասած, պատկերաւոր ներկայացումը ամենաազգաւոր կրիտերիումն է այն բանի, թէ հոգու, ներքին կամ յիշողութեան պատկերը կատարեալ<sup>2)</sup> է, թէ ոչ: Աւրեմն պատկերաւոր ներկայացումը ձևագիտութեան էական սահմանն է կազմում. այն դպրոցներում, ուր ձևագիտութեան ժամերը սուղ չեն չափուում, պատկերաւոր ներկայացումը հանդէս է գալիս երկրաչափական զծագրութիւն անուան տակ. սակայն, ինչպէս անունն էլ ցոյց է տալիս, միմիայն պլանիմետրիական ձևերն են ուշադրութեան արժանանում, մինչդեռ ստերէոմետրիական ձևերի կոնստրուկցիան բարձի թողի է արւում: Ասածներից ակներէն է, որ ձևագիտութեան դասականութիւնը առանց պատկերաւոր ներկայացման ապագիւն աշխատանք է. ուստի և վերջինս պէտք է ձևագիտութեան մէջ ինքնուրոյն տեղ գրաւէ և շնկատուի որպէս աւելորդ կցորդ ձևերի գիտողութեան: Ձևագիտական ներկայացումը դործ է ածում օժանդակ գործիքներ<sup>3)</sup>՝ քանոն, անկիւնաչափ, մասշտաբ, կարկին. ուստի և կոչուում է կապուած զծագրութիւն<sup>4)</sup>: Սակայն չէ կարելի բաւականանալ կապուած ներկայացմամբ. սրան պէտք է միանայ նաև ազատ ներկայացումը, որպէսզի ձեռքը՝ առանց

1) Մի կերպարանքի որոշ պայծառ եւ ճշգրիտ պատկերացումը անկարելի է առանց զծագրութեան. զծագրութիւնը լրացնում եւ ամբողջացնում է տարածական պատկերացումները. (Յիլլէր):

«Գիտեցածս ողորմելի զծագրութիւնը ինձ համար անկահատելի է» ասում է Գէօմէն, որովհետեւ հեշտացնում է առարկայից ստացած ամէն մի պատկերացում:

2) Բնախօսական հոգեբանութիւնը մեզ ուսուցանում է, որ ձևի պատկերացումը թիւ կլինի, եթէ շօշափում ենք առարկայի եզրները եւ մակերեւոյթը. Մյոպիսով ձևի պատկերացումը կփոխուի **շարժողութեան պատկերացման**. շարժողութիւնը ամենալաւ եւ վստահելի ծնողն է ձևի պատկերացման:

3) Ձևերի ներկայացման նպատակներից մէկն է նաև աշակերտներին բնութիւնը չափելու եւ դժելու անհրաժեշտ պարագաների գործածութեանը:

4) Երկրաչափական զծագրութիւնը որ եւ է տարածական մեծութեան ձևային եւ չափական յարաբերութիւնը ներկայացնում է անփոփոխ կերպով. այն ինչ պերսպեկտիւ նկարչութիւնը տարածական մեծութեան ձևային եւ չափական յարաբերութիւնը այնպէս է ներկայացնում, ինչպէս այն երեւում է դիտողին՝ իր տեսակէտից:

օժանդակ միջոցներն, աչքի չափով ընտելանայ պատկերացումները անօխալ ներկայացնելու. պատկերաւոր ներկայացումը ոչ այնչափ տեխնիքական վարժութիւն կամ ձեռքէ արուեստ է, որչափ հողու աշխատանք. նա է ուղիղ ներկայացնում, ով լաւ է տեսնում. աչքի ընդունակութիւնը և պաշտօնը շատ աւելի բարձր արժէք ունի, քան ձեռքինը, որ միայն վարժութեան է կարօտ: Մի հանգամանքով ևս ազատ ներկայացումը էապէս զանազանում է կապուածից. այդ այն է, որ վերջինս ուշադրութիւն է դարձնում առաւելապէս գծերի, մակարդակների և մարմինների վրայ, մինչդեռ առաջինը վերարտադրում է առարկան ռելիեֆ կերպով՝ իր բնորոշ և հիմնական կազմերով:

Ինչպէս պատկերաւոր, այնպէս էլ պլաստիկական ներկայացումը հոգ է սանում ձեւային եւ սարածական որոշ, պայծառ եւ տեւական պատկերացումներ կազմելու համար:

Ըստ այսմ, դժագրութիւնը և պլաստիկական ներկայացման դասաւանդութիւնը նիրքի րնտուրեան եւ յաջողութեան խընդրում անպայման պէտք է հետեւեն ձեւագիտութեան ցուցումներին: Ձեւագիտութեան դասը իր ուղեկիցներն համար ուղեցոյց և տոն տուող պէտք է լինի, որովհետեւ նա հիմքն է միական ամբողջութիւն կազմող այս երեք դիսցիպլիններն: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ թէ դժագրութիւնը և թէ ձեռարուեստը ինքնուրոյն՝ բացառապէս իրենց սեփական շըրջան չունին: Նիւթի տեսակէտից երկու ներկայնող Դիսցիպլիններն էլ կախուած են ձեւագիտութիւնից և կազմում են սրա անմիջական շարունակութիւնը և վերջաբանը: Ձեւագիտութիւնը նախապատրաստում է պատկերաւոր եւ պլաստիկական ներկայացումները, որոնք ըստ իրենց կարգի պարզում, լրացնում են ձեւային և տարածական պատկերացումները:

Թէպէտ նկարչական և պլաստիկական ներկայացումները մշտապէս ներքուստ շողկապուած են լինելու ձեւագիտութեան հետ, բայց նրանք որպէս մասնագիտութիւններ չեն կորցնելու իրենց ինքնուրոյնութիւնը և ունենալու են իրենց յատուկ աւանդման ժամերը: Նկարչական և պլաստիկական ներկայացումների հիմնական նպատակն է ձեւագիտութեան հիմնաձեւերը (սկընաձեւերը, ձեւային տիպերը), որոնցից բաղադրում են բնութեան և արուեստի բարդ ձեւերը, ներկայացնել և բաղմաղան կերպով դործագրել: Այս երկու տեսակի ներկայացումներն էլ իրենց նիւթը իւրաքանչիւր դէպքում խմբում են որոշ տիպական ձեւերի՝ ձեւային անհամները շուրջը. այնպէս որ վարժութիւններն ու խնդիրները (ներկայացման) ենթակարգում են այն օրէնքին, որի վրայ կառուցուած է հիմնական ձեւը: Թէ

ինչպէս են յարելու այս երկեակ ներկայացումները ձևագիտութիւնից վերցրած ձևային անհամներին, ցոյց կտայ յաջորդ օրինակը, որի նիւթն է օրջանը.

### I. Ձևագիտութիւն.

Դիտողութիւն, ներկայացումն և հաշուումն շրջանի և նրա մասերի.

### II. Նկարչական ներկայացումն.

1) Շրջանը բնական մեծութեամբ. թանաքամանի յատակը մի բուբլիանոցը.

2) Շրջանը մեծացրած մասշտաբով. մի կոպէկանոցի և երկու կոպէկանոցի դրամացոյց երեսը.

3) Շրջանը փոքրացրած մասշտաբով. ցիֆֆերըլատը. կլոր սեղանի մակերևոյթը.

4) Իրար մէջ ընկած շրջաններ.

ա) դասարանի առաստաղի մէջտեղում գտնուող իրար մէջ ընկած շրջանները (եթէ կան) փոքրացրած.

բ) Հատուած սոխը.

դ) Նշանի շրջանակը (12 իրար մէջ և իրարից հաւասարաչափ հեռու ընկած շրջագծեր).

դ) Պատկերների շրջանակները փոքրացրած.

ե) Պլիտայի իրար մէջ ընկած երկաթէ կալիարիչ.

ե) Իննը տարեկան ծառի հատուածը:

5) Շրջանի ըստանումները.

ա) Մեքենայի անիւը՝ չորս ճաղերով.

բ) Կառքի անիւը՝ վեց ճաղերով.

դ) Պատի ժամացոյցի անիւը՝ երեք ճաղերով.

դ) Հեծանիւ 12 ճաղերով.

ե) Յիֆֆերըլատը իր թուերով (12)

դ) Ժանանիւ (ըսպէանիւ) 60 ատամներով.

6) Ինքնուրոյն հանդէս եկող շրջանի մասերը.

ա) Կիտաշրջան պատուհան, երկու փեղկերով.

բ) Կիտաշրջան պատուհան՝ չորս փեղկերով.

դ) անկեան սեղան. (մակերևոյթը քառորդ շրջան).

դ) Հովհար.

7) Շրջագծի մասերը.

ա) Սղոցը՝ վերին աղեղով.

բ) Աղեղ (չձգուած)

դ) Աղեղ (ձգուած)

8) Շրջանը և շրջագիծը բազմապատկուած.

ա) Պերլչնուր.

բ) Միմեանց հետ հիւսուած շրջաններ:

գ) Գօտեհիւս չորս տերեւանի ծաղիկներով:

9) Շրջանի մասերը բազմապատկուած:

ա) Ուռիի նշտարածե տերեւները:

բ) Հողմադացի բազուկները:

10) Շրջագծի մասերը բազմապատկուած, օր գլխը անդա:

11) Շրջանը կապուած ուղիղ մակարդակների հետ:

Շրջանը եռանկեան, քառակուսու մէջ և այլն. օրինակներ կարելի է գտնել տների, եկեղեցիների դռների և պատուհանների վրայ:

12) Շրջանակերպ խմբուած ձևեր:

ա) Թրաշուշանի վեցտերեւանի ծաղիկը:

բ) Սպիտակապայտի (tussilago farfara) տերեւը ատամնաւոր

գ) Հինգ տերեւանի ռոզէտ (տերեւները կլորակ)

դ) Հինգ տերեւանի ռոզէտ (տերեւները սրտածև)

ե) Հինգ տերեւանի ռոզէտ (տերեւների վերեւը բաժանուած՝ երեքնուկի տերեւի ձևով)

զ) ռոզէտներ՝ բութ վերջաւորւող տերեւներով

է) Հնգաթերթ տերեւ

ը) Հնգաթերթ ծաղիկ:

13) Լցուած շրջաններ:

Օրինակներ խալիները, գորդերը, սրբիչները, բարձերը, ծածկոցները զարգարելու համար (ասեղնագործ և հարթակար)

14) շրջանը կապուած ուրիշ ձևերի հետ:

ա) այծատերեւ (Caprifolium)

բ) քարառոյսը (լօտոս) և պալմեաը փոփոխակի խաղողի վաղի վրայ:

գ) Կաստանի (շագանակ) տերեւը:

դ) Խեցի

ե) Հովհար:

15) Յօրինել այնպիսի ձևեր, որոնց հիմքը կազմեն

շրջանը, շրջագիծը, շրջանի և շրջագծի մասերը:

Մեթոդական նկատողութիւն.— Իայտագրական զարգանկարների, տախտակի սղոցուածքների և երկաթէ շինուածքների օրինակներ կարող են նկարել աշակերտները: Ժինչդեւ օրիորդները ընտանսօրէն աւելի հակուում են ցոյց տալիս նկարելու օրինակներ սիւռոցների, բարձերի, անձեռոցիկների զարգարման համար: Այդպիսով օրիորդների ձեռագործն ևս անբռնազբօսիկ կերպով կապակցութեան մէջ է մանուս ձևագիտութեան հետ:

## III Պլաստիկական ներկայացումն.

- 1) Կարտոնից շինել բաժակակալ
- 2) Կարտոնից շինել 24 cm տրամագծով լամպակալ
- 3) Կարտոնի կտոր արեղիկի համար շինել կալիարիչ և վրանկայցնել շրջանաձև պատկեր.
- 4) Փայտից սղոցել (շրջանի  $1\frac{1}{2}$  հատուածով) անկեան էտափեր.
- 5) Նրջանի քառորդ հատուած՝ ծիածանի գոյներով նկարուած.
- 6) Պատի զամբիւղ (հատուած շրջանի յատակով)
- 7) Թղթից հովհար ծալել.
- 8) Գործել (աղջիկների աշխատանք) լուացման, թէյի դարնիտուր (օճառակալի, տաղի, թէյնոցի համար ևլն):

Այսպէս կարելի է պատրաստել առանին կեանքի մէջ գործածւող անթիւ պարագաներ:

Նրջանի օրինակը բաւարար չափով կարող է լուսաբանել, թէ ինչպէս պէտք է իրենց գուգահեռական ընթացքով սերտ կերպով շաղկապուեն ձևագիտութիւնը, գծագրութիւնը և ձևաբուեալը:

Ա. Օ.

### ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այժմ մի հարց է ծագում. Բազրատունեաց ժամանակ ճորտատիրութիւն մեր մէջ գոյութիւն է ունեցել: Միթաք Գօշի Գատատանադիրքը գիւղացիների մասին հետեւեալն է ասում. «Այստ յԱրարչէն եղև մարդկային ընութիւն, այլ ծառայել տէրանց յազագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան.— զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանց եւ բռնադատէ զգնացեալսն անզրէն դառնալ, զինի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ<sup>1</sup>»: Ինչպէս այս, նոյնպէս և մի քանի ուրիշ տեղեկութիւնների վրայ հիմնուած կարելի է ասել, որ եթէ ճորտատիրութիւնների, եւրոպական մտքով, մեր մէջ գոյութիւն չի ունեցել, բայց գիւղացիութիւնը մի այնտեսակ դրութեան մէջ է եղել, որ ճորտականից հեռու չէ: Այդ երևում է թէ հարկերի շատու-

1) Միթար Գօշի Գատատանադիրք եր. 320.